



## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

### «Մեդիա և միգրացիա» ծրագրի շրջանակում

### **Փախստականների համաշխարհային օրվան նվիրված հանդիպման մասին**

Հունիսի 18-ին, ժամը 10:00-ին Ադվերանի (Կոտայքի մարզ) Բեսթ Վեսթերն Ադվերան (Best Western Aghveran Hotel) հյուրանոցային համալիրում ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայությունը (ՄԾ)՝ ՄԱԿ փախստականների գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ/UNHCR) և Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ/ARCS) հետ սերտ համագործակցությամբ կազմերպում է «Մեդիա և միգրացիա» ծրագրի հերթական հանդիպումը ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ:

Միջոցառումը նվիրված է փախստականների համաշխարհային օրվան, որն ամբողջ աշխարհում ամեն տարի նշվում է հունիսի 20-ին:

Լրագրողներին ուշադրությանը կներկայացվեն հետևյալ թեմաները.

- փախստականների միջազգային պաշտպանություն. #stepwithrefugees արշավը, փախստականների համաշխարհային օրվա խորհուրդը,
- Փախստականները Հայաստանում.
  - ոլորտի հիմնահարցերը,
  - ՄԾ գործառույթն ու ոլորտը կարգավորող իրավական ակտերը,
  - նոր ճանաչված փախստականներ, պետական ինտեգրման ծրագիրը, վիճակագրություն,
  - Ինտեգրման հայեցակարգի համալիր վերանայում:
- մարդասիրական ու սոցիալական աշխատանքը փախստականների հետ՝ պետության, ՄԱԿ ՓԳՀ- և վերջինիս միջոցով ոլորտի հասարակական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ,
- ՀԿԽԸ գործունեությունը՝ փախստականների պաշտպանության, աջակցության և ինտեգրման ոլորտում
- փախստականների հիմնախնդիրների լուսաբանումը հայկական մեդիայում. ոլորտի մեդիա բովանդակությունը բարելավելու ուղիներ:

Հիշեցնենք, որ «Մեդիա և միգրացիա» ծրագրի բացման [միջոցառումը](#) տեղի է ունեցել 2019 թ-ի ապրիլի 15-ին, երկրորդ [հանդիպումը](#)՝ վերադարձի թեմայով՝ ապրիլի 22-ին:

**Հանդիպումների երկարաժամկետ նպատակը Հայաստանում միգրացիոն գործընթացների վերաբերյալ որակյալ մեդիա բովանդակություն ստեղծելն է:**

«Մեդիա և միգրացիա» ծրագրի գործընկերն է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ՄՔՄՄԿ/ICMPD), որի նախաձեռնության Հայաստանում անցկացվում է «Ճամայրուկ 2019» միգրացիոն լրագրողական ամենամյա մրցույթը: Թեմատիկ բոլոր նյութերի հեղինակները խրախուսվում են մասնակցելու մրցույթին, որը մրցանակաբաշխությամբ կամփոփվի տարվա վերջում՝ որպես ծրագրի ամփոփիչ միջոցառում:





## Օրակարգ

### Փախստականների համաշխարհային օրվան նվիրված հանդիպման

18.06.2019թ., ժամը՝ 10:00, Աղվերան, Բեսթ Վեսթերն Աղվերան (Best Western Aghveran Hotel)

09:30-10:00	<u>Գրանցում, սուրճ</u>
10:00-10:20	Բացման խոսք, ՄՕ պետի տեղակալ Իրինա Դավթյան (ենթակա է հաստատման), ՄԱԿ ՓԳՀ իրավաբանական բաժնի ղեկավար Իննա Բորիսևիչ, Հայկական Կարմիր խաչի ընկերության բնակչության տեղաշարժի բաժնի ղեկավար Հասմիկ Խաչատրյան
10:20 -12:00	Փախստականների միջազգային պաշտպանություն. #stepwithrefugees արշավը, փախստականների համաշխարհային օրվա խորհուրդը, ՄԱԿ ՓԳՀ արտաքին կապերի համակարգող Անահիտ Հայրապետյան
12:00-12:15	<u>Սուրճի ընդմիջում</u>
12:15-13:00	Փախստականները Հայաստանում, ՄՕ ինտեգրման հարցերի բաժնի պետ Իրինե Հակոբյան
13:00-14:00	<u>Ճաշի ընդմիջում</u>
14:00-14:45	ՀԿԽԸ գործունեությունը՝ փախստականների պաշտպանության, աջակցության և ինտեգրման ոլորտում ՀԿԽԸ Բնակչության տեղաշարժի բաժնի ծրագրի մասնագետ Կարեն Խաչատրյան
14:45-15:30	Փախստականների պաշտպանությունը ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից, ՄԱԿ ՓԳՀ իրավաբանական բաժնի աշխատակից Նաիրա Մարության
15:30-15:45	<u>Սուրճի ընդմիջում</u>
15:45-16:00	Փախստականության լուսաբանումը, որակյալ մեդիա բովանդակություն ստեղծելու ուղիները տվյալ թեմայով, ՄՕ հանրային կապերի պատասխանատու Նելլի Դավթյան
16:00-17:15	Գործնական աշխատանք
17:15-17:45	Հարցուպատասխան
17:45-18:00	Ամփոփում
18:00	<u>Ընթրիք</u>

Հավելյալ տեղեկությունների համար՝  
**ՀՀ ՏԿԶՆ ՄՕ**  
**հանրային կապերի պատասխանատու Նելլի Դավթյան**  
**հեռ. +374 91 520254**  
**էլ. փոստ ndavtyan.sms@mta.gov.am**

